ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն	
Համար	N 414-Ա
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Base act (23.04.2019-till now)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	Չի հրապարակվել պաշտոնական պարբերականում
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	18.04.2019
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	22.04.2019
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	23.04.2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ապրիլի 2019 թվականի N 414-Ա

ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. «Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության, «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերության, «Sylex SARL» ընկերությունից (Շվեյցարիայի Համադաշնություն) և «Մեյսիս Ապահով» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից (Հայաստանի Հանրապետություն) բաղկացած համատեղ ձեռնարկության միջև 2017 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված՝ Էլեկտրոնային առողջապահության տեղեկատվական միասնական համակարգի օպերատոր հիմնադրելու եղանակով որոշակի ծրագրային փաթեթ, շարժական գույք և այդ տեղեկատվական համակարգի սպասարկման իրավունքներ փոխանցելու կոնցեսիայի պայմանագրի շրջանակներում 2018 թվականին ձեռք բերված և նշված պայմանագրի 5-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող սարքավորումները (այսուհետ՝ գույք)՝ 60,186,666.66 դրամ (առանց ԱԱՀ) արժողությամբ, ամրացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի հանձնման - ընդունման աշխատանքները:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**

2019 թ. ապրիլի 22
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
ապրիլի 18-ի N 414-Ա որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎՈՂ ԳՈՒՅՔԻ

NN ը/կ	Գույքի անվանումը	Քանակը (հատ)	Ձեռքբերման տարեթիվը	Ձեռքբերման գինը (դրամ)	Ընդամենը՝ ձեռքբերման արժեքը (դրամ)
1.	Սերվեր HPE ProLiant BL460c Gen10 10Gb_20Gb FlexibleLOM Configure-to 863442-B21	5	2018	6,574,398.67	32,871,993.33
2.	Տվյալների պահպանման համակարգ HPE MSA 2050 SAN DC LFF Storage Q1J00A	1	2018	15,958,132.5	15,958,132.5
3.	Սվիչ Brocade 8/24c Power Pk+ SAN Swch for BL AJ821C	2	2018	5,678,270.42	11,356,540.83
	Ընդամենը				60,186,666.66

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**